

Հասմիկ ՄՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆՀԱՏ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ (V-XV դդ.)

Հայ միջնադարյան մշակութային մթնոլորտում մասնագիտացված երգարվեստը զարգացել է մի կողմից խիստ կանոնակարգված օրինաչափությունների երմքով, մյուս կողմից անհատական արվեստին պատշաճ բնորոշչանքով: Միջնադարյան երաժիշտը մեկ անձի մեջ հաճախ միավորել է և՛ հեղինակին, և՛ կատարողին: :

«Դժբախտաբար,- գրել է Մ. Արեղյանը,-մեր եռգեղոր երգերի հետիմակները մեծ մասամբ անհայտ են. մենք չգիտենք, թե մեր որ երգն ումից և երբ է գրված: Առկա վսթիվ ծանոթություններն այդ մասին XIII դարից են գալիս, կամ երգերի ժողովածուների՝ Շարակնոցների մեջ գրված անդեկություններն են, որոնք նույնպես շատ եին չեն, որովհետև Շարակնոցի շատ եին ձեռագիր չունեինք»:¹

Ավելին, Շարակնոցներում անդ գաած հեղինակային տարանջամները հանգեցրել են դրանց երմքում լուկ ավանդություն դիտելու անսակեաին: Շարակնոցի ասական մի շարք աշխատություններում մտտեմագրական այլ աղբյուրների օժանդակ տվյալների երման վրա բացահայտվել են այդ ավանդությունների ճշմարտացիության կուրևոր կողմեր: Սյուսեղ պատմագրությունը սր արժեքավոր աղբյուր է որը նաև կարևոր կողմնորոշիչ դեր ունի: Պատմագրական աղբյուրների եմարավորին չափով ամբողջական ուսումնասիրումը եմարավարություն կնձեռնի սանդեղելու եայ միջնադարյան անհատ երաժիշտների մասին եավասաի սոլյալների մի եանրագումար, որը սաայսօր բացակայում է եայագիտության մեջ: Սույն աշխատանքը մի փորձ է՝ լրացնելու այդ բացը V-XV դդ. պատմագրության սահմաններում: Կարելի է աարբերել պատմագրական ալյալների երկու խումբ.

ա) Տվյալներ, որոնք եավասաում են միջնադարյան որևէ հեղինակի երաժշտական գործունեությանը, առանց կոնկրետ սանդձագործության եիշատակության:

բ) Տվյալներ, որոնք եավտասում են միջնադարյան որևէ հեղինակի կոնկրետ սանդձագործությունը (կամ սանդձագործությունները):²

Անդրադառնանք առաջին խմբի վկայություններին տ եիշատակություններին Դրանց մի սավար մասը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժշտական գործունեությանը, որ նրանք ծավալել են գրերի սանդձամից եետո Դիշտ է, պատմագրական անդհկությանները մասնավորեցված չեն, ընդգրկում են լայն տեսադաշա՝ ներգրավելով նաև նրանց գործունեության երաժշտական կողմը Դրանց մի մասը վերաբերում է գրերի գյուտից եետա Մաշտոցի և Սահակի քարգմանչական աշխատանքներին, մյուս մասը՝ նրանց մանկավարժական գործունեությանը:

Անշուշտ, վկայությունների առաջին խումբը պեաք է բնութագրել ավելի լայն իմաստով, քանի որ քարգմանչական աշխատանքը վերաբերել է քրիստոնեական ողջ ծիսակարգի եայացմանը: Կորյունի վկայությամբ, Ասավաձաշունչը քարգմանվել է Մաշտոցի ու Սահակի եամասեղ աշխատանքով՝ «ի ձեռն երկուց ետասարեղց»³ կամ, ավելի առույգ՝ նրանց դիկավարությամբ:՝ Այս վկայությունները եասաաաում են, որ երկա նշանավոր գործիչները անմիջականորեն մասնակցել են նալ եայոց եկեղեցու բարեմորդչական աշխատանքներին: Ըսա Կորյունի՝ «Եւ դարձեալ բագում և անեարմար գոմոս վանականաց ի շէնս և անշէնս, դաշաականս 1 լեռնականս, անձաւամասս և արգելականս բնակեցուցեալ եաուաաաեր»:⁵ Պատմի:

¹ Մ. Արեղյան, *Երկեր*, Ե. Գ., էջ 527-528:

² Նշենք, որ երկրորդ խումբը ինքնըստիմյան իր մեջ կրում է նաև առաջինի առանձնահատկությունները

³ Կորյուն, *Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ըմբերցվածներով ի ձեռն պրոֆ. Մ.Արեղյանի, Եր., 1941, էջ 27-29:*

⁴ Ղազարայ. *Փարպեցույ Պատմութիւն Հայոց և թուրք առ Վահան Սամիկոնեան, Տիփլիս 1904, էջ 28-29:*

⁵ Կորյուն, *Վարք Մաշտոցի...*, էջ 80:

Ղազար Փարպեցին Սահակ Պարթևի գործունեության արգասիքն է համարել զարդարված եկեղեցական արարողությունները. «Եւ ասարեալ ի գլխս սրբոյ եայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ եռակոր փսսաակոյն՝ կարգեցան փաղվաղակի յայնմեհտէ դպրոցք եօսին ուսմանց. բազմացան դասք գրչաց, արևեալս ստնելով զմիմեանքք. զարդարեցան պիւշտստմունք սուրբ եկեղեցոյ. յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովողոց ի ստնս Փրկչին և ի ժողովս մարաիրոսաց: Որք շանեալք լի եռակոր օգախ՝ ընթանալին խնդալիցք ի եսարդմանէ մեծի իտրերդորոյն, արծակեալք լիւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և աղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի երապարակս և ի փողոցս ատունին»:⁶ Որոշ այլ արժեքավոր վկայություններով էլ հավաստվում է Մաշտոցի և Սահակի մանկավարժական գործունեությունը: Այսպես. ըստ Խորենացու՝ «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և ընթալ զնշանազիր մերոյ լեզուիս, և երամտնաւ Վռամշապետայ և մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկածայնս և երկարոգիս, և դստրոցս զկարգեաց յամենայն գալստս»:⁷ Ըստ Կորյունի՝ «Անդ էր այնուհետև չարբենալ զինով, այլ առաւելով եռով, և պարասանել զսիրտս երգովք եռեկորոց, ի փստս ք զգութիւն Աստուծոյ»:⁸ Այս մասին Կիրակոս Գանձակեցին եիշտական է. «Եւ ժողովին այնուհետև մանկանս բազումս և ուսացանն գրովանդակ աշխաթես և բաժաննն զմանկունս մտտաղս և քաջոսմունս, փափկածայնս և երկարոգիս յերկսս, և կտրգն դպրոցս ասորերեն և եամարեն... Սորա երգեցողք ծիծռունք տատրակք քաղցրախօսք և ողջախեք, սրբութեան սիրիչք և սովտեղութեան անարգիչք»:⁹ Այսուհետև ակներև է դառնում երգ-երաժշտության ունեցած տրժանի տեղը ժամանակի կրթական համայնքում: Մաշտոցի և Սահակի ջանքերով եիմնասլով են հայոց այն վարդապետարանները, որոնք ավելի ուշ՝ հատկապես զարգացած ավատատիրության դարաշրջանում լի են եղել փիլիսոփայա երաժիշտներով, և որանդ, սկսած VI դարից, դասավանդվել են «տրվալիւմ» և «քվատրվալիւմ» դասընթացները:¹⁰

Պատմագրական վկայությունները լիովին հավաստում են, որ V դարի սկզբում հայոց քրիստոնեական ժխակարգի բարեկարգումը ղեկավարել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը:

Սասնակցե՛լ են արդյոք Լրվու մեծ գործիչները ժխակարգի երաժշտության բարեկարգմանը: Այս մասին ուղղակի հիշատակաթյաններ չկան, սակայն որոշ վկայություններում դու լիովին ենթադրվում է: Այդ տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Ղազար Փարպեցա հիշատակությունը Սահակ Պարթևի մասին. «...որոց օգնելով զօրէր երանելին Մաշտոց, եանդիպեցուցանէր զեայերեն արութայսն ըստ կարգման սխալիւրայիցն Յունաց, ստեալ եարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթովիկսն Սահակայ որ յոյժ տոլցեալ անցուցանէր վարժիւք զբազում զիւնովքն Յունաց, եղեալ կաարելապէս եմուտ երգողական տառիցն և եռետողական յորդասաց յայտնարտնութայմբ, ևս առուել տեղեկացեալ փիլիսոփայական արաեստիցն ցուցանիւր»:¹¹ Հայագիտության մեջ «երգողական տառից» արտասայտությունը դիտվել է «երաժշտական տառերի» խմաստով: Այսպես. ըստ Մ.Արևելյանի՝ «որ Սահակ Պարթևը կաուարելապէս եմուտ է եղել «երգողական տառիցն», կնշանակի՝ իրական եիմք ունի Ծարակնոցի ետորդումը, քե «նալս սուրբ Ստեակ և Մեսրոպ տսուցին զուրն եղանակալոր ծայնսն», ետվսնորեն և այն, որ ցրանք եեղինակ են եղել կցորդներին»:¹² Ծարակնոցի և մտանդագրական այլ աղբյուրների տղեկություններին դեռևս կսնդրադատմանը: Այժմ նշենք, որ եետագայում «երգողական տառերի» ետմակումանի քննությունը բերել է այն եզրահանգմանը, որ, ինչ-

⁶ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն..., էջ 17:

⁷ Սրբոյ հօրն մերոյ Սովակէսի Խորենացոյ Մատենագրութիւնը, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1865, էջ 247:

⁸ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 82:

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 26-27:

¹⁰ Տես Գրիգոր Մագիսարոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 72, 109:

¹¹ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն ... , էջ 15-16:

¹² Մ. Արևելյան, նշվ. աշխ., էջ 531:

պես նշել է Ն. Թախմիզյանը, Սահակ Պարթևը «եմուտ է եղել հունական ձայնավոր առոճերին վերաբերող երաժշտա-քերականական հինավուրց ուսմունքի մասնահատուկ բնագավառում»¹³, մաև «բնդհանրապես երաժշտարվեստի հարցերում»:¹⁴ Այս առումով «խոստում» է մաև Ղազար Փարպեցու «տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն» արաանայությունը: Հայանի է, որ միջնադարում *փիլիսոփան* մաև երաժիշտ-երգահանի կոչումն է եղել: Հիշենք Ներսես Շնորհալու այն վկայությունը, թե «ունինք սովորաբար փիլիսոփայ ասել որք *յերաժշտական արհեստս կառարեալք են*»:¹⁵ Ղազար Փարպեցու եիշատակությունը թույլ է ապիս Սահակ Պարթևին դիտելու որդես ժամանակի նշանավոր երաժիշա գիանակուններից մեկը:

Այժմ անդրադառնանք Մաշտոցի երաժշտական գործունեությանը նվիրված հիշատակություններին: Այդպիսի աեղեկություններ պտեպումվել են, թեև վաղ միջնադարյան աղբյուրներում դրանք չեն հանպիպում: Այդ մասին կարևոր աեղեկություն ունի XII-XIII դդ. մաանագիր Կարապետ Ստսնեցին՝ Մաշտոցին նվիրված ներբողում, որաեղ ասվում է, «Եւս և գիառս թագաւորաց և գպաւսիւս իշխանաց և զգովութիւնս յրոամկաց, զծաղկտեռա գինյան, և զարուեսասուր սատասուկսն, զքաղցրաձայն աւելիս՝ և զուշաասար ջմարս, և զգողարիկ կերակուրս, և որ ինչ մասունք եեաեին սոցա: ... Սանձեր զլեզուն և աղիւէր զշրթունսն, ոչ շարժիլ և ոչ բանիլ ի բանս ունայնս, այլ պարապել միշա ասատաւաշունչ մաանեից. *յարմարէր զբերանն քնար՝ և զատամունսն շար, զշրթունսն մատունք, և զլեզուն կնարնորց. և զհոգին խառնեալ ընդ Ասաւծոյ հոգւոյն, և յեալ երաժիշա՝ երգիւր քաղցրաձայն գերզս եռկարս ի փառս սուրբ երրորդութեան*»:¹⁶

Մերոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժիշա լինելը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այն գիաակուն կարծիքի եիմնավորման համար, որի համաձայն՝ երկու մեծերի դործունեության արգասիքն է համարվում ՌԹձայնի եամակարգումը: Այս տեսակետից եեաաքքիւր աղբյուրներ են հանդիսանում Առաքել Սյունեցու (XV դ.), Ստեփանու Չիք Ջուլայեցու (XVII դ.) և Հակոբ Սսեցու (XVII դ.) չաիածո ստեղծագործությունները.

Նոցա զբլուխրն ամենին

Մերոպ, Սահակ էր պարթևին,

Բուն թարգմանիչք եայոց ազգին,

Սուրբ երաժիշտք ասատաւային

Այնք որ ութեակ ձայնս կարօեցին,

Եւ կըրկնակի Սաեղի եղին:¹⁷

Նախ մեծ Մերոպ Տաբոնեցին

Ըզկարգ Աղցիցն ամենեին:¹⁸

Նախ Աղցաց կարգն է Մերոպայ:¹⁹

Համադրելով այս քերթվածքները պաամուգրական եիշաաակությունների հետ, Ն. Թախմիզյանը եկել է այն եզրակացության, որ սուաջինները երկրորդների մասնավորեցումն են:²⁰ «Մերոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը ձայնեղանակների վերանայման ու վերակարգավորման գործը նույնպես պեաք է գլուխ թերած լինելին, - համոզված է Ն. Թախմիզյանը, - որովեեաև նրանք V դարի մշակութային խոշոր

¹³ Ն. Թախմիզյան, Սահակ Պարթևը և հայ եկեղեցաեան երաւովեառը, Էջմիածին, 1973, I, էջ 10:

¹⁴ Նույնը:

¹⁵ Ն. Թախմիզյան, Ներսես Շնորհալին երաւիշա և երգաեան, Եր., 1973, էջ 15-16:

¹⁶ Ներբողեան յաղագս վարոց սրբոյն Մերոքայ, ասացեալ Կարապետ եպիսկոպոսի եւ Վարդապետի Սասնեցւոյ, «Արարաա» 1897, էջ 379-380:

¹⁷ Առաքել Սյունեցին և իր քերթուածքները, Վենիսիկ, 1914, էջ 322-323:

¹⁸ Բերվում է ըստ Ն. Թախմիզյանի «Մերոպ Մաշտոցն ու եայոց եռկար երգարվեսաը» եռվածի, «Բանրեր մատենադարանի», 1964, հ. 7, էջ 175:

¹⁹ Նույնը:

²⁰ Ն. Թախմիզյան, մշվ. աշխ., էջ 173:

շարժման ռաեվիրաներն էին և, որպես այդպիսիք, կարևոր շաա գործերի նախադեմոնոր: Այնուհետև նրանք իրենց շրջապատի ամենագարգացած գործիչներն էին, և, հեռանալով, երաժշտության տևությանն ու գործնականին էլ քաջապաշտյակ մարդիկ: Նրանք պատասխանաատու էին ծեսի և արարողության մաս երաժշտական մասի բարեկարգման եամար: Առաջինը՝ իր պաշտոնի բերտմով, իսկ երկրորդը՝ վարդապետի և ուսուցչի իր եասարակական մեծ նիբքով»:²¹

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գործի շարունակողներից մեկը Հովհան Մանդակունին է, որը, եամաձայն Հովհաննես Դրասխանակերացու եիշատակության, ողջ ժամակարգության բարեկարգողն էր. «Եւ զկնի նորա (Գյուտ կաթողիկոսին) յաջորդէ զաթոռ հայրապետութեան Յոնան Մանդակունի, որ առցեալ իսկ էր ամենայն հոգևոր եանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պալծատուպէս զամենայն աղօթական ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ. և յարդարէ ևս առս զգուշացացիս ղիտաւորական կենցաղոյս, որ բերէ զոգուցն վրկութիւն»:²² Այս կարծիքին է նաև Կիրակոս Գանձակեցին. «Եւ... Յովհան Մանդակունի ... բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի՝ կարգեաց քարոզս աղուեացիցն և զաղօթս նոցա զերորդ ժամուն և զվեցերորդին, և զեկեղեցւոյ եիմնարկէքն, և ժամանաքի, սկիի և մաղզմայի, և զիրք, և կնունք, և խաչ օրենել և պսակ, զայս ամենայն նորա կարգեալ է»:²³ Այս և այլ մտտեմագրական աղբյուրների վրա եիմնվելով՝ Ն.Թաեմիզյանը ամբողջացրել է V դարի նշանավոր կաթալիկաի մեծ վասաակը՝ զրելով. «Նա նոր նյութերով հարսաացրել և խմբագրել է եայկական տոաջին կսնոնացված երգարտնր - եիմնավորց Աղոթարան-ժամագիրքը, քարզմանել է (եունարենից) մի քանի Պասարազամատույցներ և խմբագրել ա եասաաաել է հայոց Պասարազամատույցը: ... Իր աաղանդավոր սաեղծագործությաններալ Մանդակունին նախատել է հայոց ինքնուրույն նորաստեղծ եոգևոր երգի եեաագա զարգացմանը»:²⁴

Այլոց մասին նմտմաաիպ եիշատակությունները որոշ ղեայքերում սուր վիճարանությունների առիթ են հանդիսացել, հատկապես, երթ քացակայել կամ շաա սակալ են եղել եամարնույթ օժանդակ աղբյուրները: Այսպես. ժամանակին եակամեա կարծիքների աեղիք է տվել Շիրուկի Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Շոնի երաժշտական գործունեությունը վկայալ Վարդան Արևելցու եադորդումը: Անդրադառնալով VII դարում Ներսես Գ կաթողիկոսի օրոք աեղի ունեցած մի իրադարձության, պատմիչը զրում է. «Սա մեծ ժողովով առնէր զաօն վարդապետին, և ութ եարց փոխեցին, և ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա երամայեաց ընարել զարժանն և զայն միայն ուսանել, զոր և արար ՚ի ձեռն սրբոյն Բարսղի, մականունն Շոն կոչեցելոյ, որ եր առաջնորդ սուրբ ուխաին՝ որ Դպրավանք կոչի ՚ի զաւառին Անույ. որում ասեն, թէ եօթն անգամ եաես ԳՔրիստոս սքանչելի եամարձակութեամբ, վասն որոյ Շոնընաիր կոչի շարականս որ պաշտի յեկեղեցիս մեր»:²⁵

Մ.Արեղյանը ենթադրել է, որ նկարագրված «ղեայքը երևի XII դարից Ներսես Շնորհալու և իր ժամանակակից՝ «ամենագովելի» և «ասաուածաշնորհ» Բարսեղ վարդապետից» (1162թ.) փոխադրված է VII դարը՝ Ներսես Շինալի ժամանակը:²⁶ Սակայն, ինչպես ցույց է ավել Ն.Թաեմիզյանը, XII դարում ապրող Բարսեղ Զեաունցու (որը «Շոն» մականունը չի կրել) կենդանության օրոք Ներսես Շնորհալին կաթողիկոս չէր տակալվին»:²⁷ Բարսեղ Շոնը ամենայն եավանակամաթյամբ եեղինակել է «Յարութեան» կոչվող մեծացուցնների ԱԶ-ԴԿ առանձին շարքի եիմնա-

²¹ Ն. Թ ա ե մ ի գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 177:

²² Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերացույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 90:

²³ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն..., էջ 35:

²⁴ Н. Т а г м и з я н, Оваи Мандакуни и армянское духовное профессиональное песнопение. В республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, тезисы, Ер. 1982, стр 405.

²⁵ Հաւարումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 69:

²⁶ Մ. Ա Ր ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 530:

²⁷ Ն. Թ ա ե մ ի գ յ ա ն, Բարսեղ Շոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, ԲԵՀ, 1973, N 1, էջ 214-215:

կան մասը,²⁸ և, որ ավելի կարևոր է, ճանձնելու այն երգերի անդրա-
նիկ ժողովածուն կազմողն է:

Պատմագրական որոշ վկայությունների աղբյուրագիտական արժեքը բացա-
ռիկ է նրանով, որ դրանք ընդգրկում են սանդուխտության երաժիշտների մասին, ո-
րոնց ստեղծագործական ժառանգությանը վերաբերող այլ աղբյուրները շատ սա-
կավաթիվ են կրում էլ բոլորովին չեն պահպանվել: Անդրադառնալով Անանիա Նա-
րեկացու երաժշտական գործունեության մասին Ռիտտանես եպիսկոպոսի և Սան-
փանոս Տուրոնցու վկայություններին: Ռիտտանեսի, որի Պատմության պատմվորա-
ստուն ենք ինքը՝ Անանիա Նարեկացին էր, պատկերավոր նկարագրության մեջ
Նարեկացին «բանիբան Պոնեհիկա» և «եռակավոր Հոստո» էր,²⁹ և «եռակավոր-
կան երգով գեղեցիկամբ գերի վերայ քան զամենեսեան» էր:³⁰ Պոնեհիկոս, հոստոյ
անվանումներից ակներև է, որ Նարեկացին իր ժամանակի նշանավոր երաժիշտ-
ներից պետք է լիներ: Այդ նրա օրոք էր, որ երանադրվեց եռակավոր Նարեկա վան-
քը, որի մասին Սանփանոս Տարոնցին գրել է. «Այսպես և յայժմ ժամանակիս շինե-
ցալ Նարեկ ի Ռշտունաց գաւառին նոյն կտրգադրութեամբ, բազմազարդ պաշա-
նապայծառ երգեցողովրդ և գրական գիտողօր»:³¹

Զմեկյալ Նարեկացու մասին վկայությունները՝ Ն.Թաեմիզյանը հայտնել է այն
միտքը, որ «ձեռագործում կտրող են հայանարերվել նրա գրչին պատկանող ա-
ղեր և այլ երգեր»:³² Ն.Թաեմիզյանն ունդրադարձել է նաև Նարեկացու վերագրվող
«Խրատ քաեանայից»-ին, որը դիտվել է իբրև նրա երաժշտական գործունեությունը
հավաստող վկայություն:³³ Սուկյան, ըստ Հ. Թամիրազյանի, այն Անանիա Նարե-
կացու աշխատությունը չէ:³⁴ Եվ չնայած դրան, պատմագրական ավայները երբեք
առկա են եօգուտ Նարեկացու երաժշտական գործունեության մասին կտրծիքի:

Պատմագրական երաժշտականությունների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում
XII դարի այլ մշակույթի նշանավոր գործիչ Խաչատուր Տարոնցու երաժշտագի-
տական գործունեության մասին Կիրակոս Գանձակեցու եղբայրունը. «Էր ի աօնա-
խմբութեան եկեղեցւոյն և սուրբ վաթղայսետն Խաչատուր Տաթօնացի, առաջնորդ
սուրբ ուխտին, որ կոչի Հաղարծին, այր սուրբ և առաքինի և գիտութեամբ երգչա-
կեալ՝ մանասանը երաժշտական արեստի: ...Սա երբ զխազն ի կողմանս արևելից,
զանմարմին եղանակսն ի մարմին ածել, զարարեստսն իմաստունց, որ ցայն ժամա-
նակս չէր սփռեալ բնդ աշխարհ: Սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց»:³⁵ Թեև Կի-
րակոս Գանձակեցին լռում է նրա ստեղծագործական ժառանգության մասին, սու-
կյան պատմագրի արժեքավոր երաժշտականությունը վճռորոշ դեր է կատարել Տարո-
նցու ստեղծագործական ժառանգության խրթին հարցերի պարզաբանման գոր-
ծում: Միակ ստեղծագործությունը, որը հավաստիորեն համաթվել է Խաչատուր Տա-
րոնցուն, քաեանայի զգեստավորման «Խորհուրդ իարին» շարականի պատկան-
ված երեք աարբերակներից մեկն է:³⁶

Որոշ հետիմակներ Տարոնցուն են վերագրել գանձերի ու աղերի զգալի մաս
(Հ.Տաշյան, Գ.Զարպեանայան), ոմանք էլ, եակսաակը, դրանք դնում են Խ.Կեչա-
նցու ժառանգության մեջ (Ֆր. Կոնիքի, Գ.Հովհաննիսյան): Այնուհանդերձ պետք
է հուսալ, որ մեր աղբյուրների հայանարերման շնորհիվ ի վերջո լույս կսփռվի մեծ
երաժշտագետի՝ Խաչատուր Տարոնցու ստեղծագործական ժառանգության դեռևս
մութ էջերի վրա:

²⁸ Ն. Թաեմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Եր., 1973, էջ 19:

²⁹ Ռիտտանես եպիսկոպոս, Պատմություն Հայոց, Էջմիածին, 1871, էջ 113-114:

³⁰ Նույն տեղում, էջ 112:

³¹ Ստեփանյան Սարգիսի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, Պետերբուրգ,
1885, էջ 174:

³² Ն. Թաեմիզյան, Անանիա Նարեկացու և Նարեկ վանքի երաժշտական ավանդույթ-
ների մասին, «Էջմիածին», 1976, հ.9, էջ 32:

³³ Նույն տեղում, էջ 34-36:

³⁴ Հ. Թամիրազյան, Անանիա Նարեկացի, Եր., 1986, էջ 200-201:

³⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն..., էջ 211-212:

³⁶ Չայնազյան Երգեցողությունը Սրբոյ պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 192:

Ավելիցս ենք նաև, որ այդ կարևոր խնդրի մասին արժեքավոր դիտողություն ունի Ն.Թանմիզյանը, որ մի շարք գանձերի գրական անքստերի համեմատության եիման վրա ենթադրել է, թե «Տարոնեցին սույն և նման գանձերի եռրինումով գրիչը կոփելուց հետո է կերտել զգեստավորման երգը»:³⁷

Սինչ այժմ դիտարկված վկայությունները միջնադարյան եեղինակների կրաժըշտական գործունեության մասին ընդհանուր սփսի ընտրագրումներ էին: Սիջնադարյան զբաղվոր աղբյուրներում հաճախ են հանդիպում նաև վկայություններ այս կամ այն անհատ երաժշտի մասին: Այդպիսի մեծաքանակ վկայություններով լի են իայերեն միջնադարյան ձեռագրերի եիշաաակարանները: Նախ մեթրերենը պատմագիրներին. Ստեփանոս Տարոնեցու *Իմաստակն Սամուէլ (X դար)*³⁸ Մատթեոս Ուոնայեցու *Թեոդորոս Ալախոսիկ (XI դար)* և *Խաչիկ (XI դար)*,³⁹ «որ էր կրաժիշտ ի վերայ ձայնաուր եղանակաց»,⁴⁰ Գրիգոր Մագիսարոսի *«յաղագս երաժշտաիդ Դանիէլի» (XI դար)*⁴¹ վկայությամբներ:

Նշենք նաև համարնույթ վկայությունները ձեռագրերի եիշաաակարաններից. «Ես նուսաս երաժիշաս Թարոս գփախագումն սթսի իմոյ ու յիշատակ եոգոյ իմոյ հաու գրել գաուրը Աւետարանս...» (XIII դար):⁴² «Եւ արդ արարեսդ սկիզբն Տաղարանիս ...աղաչեմ զամենեսեան ... յիշեսիք ի Տէր, և զՅուսեփ երաժշտապետ, որ զաւրինակն անձանձիւր շնորհեաց» (XIII)⁴³ «Եւ արդ աղաչեմ եոդացեալ ընրանովս... յիշեսիք... և զարի վարդապետ յա՛ զՍամուէլ երաժշաապետն և մակացու յսստուածայինս...» (XIII դար):⁴⁴ «ԶՀալսէփ եղկելի գաաացող ու զգծող սորա յիշեսիք ի Տէր, եւ զեոգեուր հայր իմ եւ զուսուցիչ զՓիլիպպոս երաժիշտ» (XIII դար):⁴⁵ «Դսրձեալ աղաչեմ յիշել ի աէր զեոգեոք հայրս իմ և զյոյժ երախաաուր ուսուցիչ իմ զտէր Սահակ բանի սպասաուրս և քաղցրաձայն երաժիշտ» (XV դար):⁴⁶ «...ընդ նմին յիշեցէք զեոգեուր եղարքս մեր Աւեաիք վարդապետն երաժշտականի, որ ուսուց զձայնաուրքն ընդունելի, և զտէր Յովսէփ քաջ փիլիսոփայն, որ ըագում աշխաաեցաւ ի յեա մեզ յուսուցանելն զգժարախազ շարակունքս...» (XV դար):⁴⁷ «Յիշեսիք ի մաքրափայլ յաղօթս ձեր և ասաաած ձեզ յիշողացո և մեզ յիշելոցս, առեսասարակ, ողորմեսցի, ամեն. նաև զեոգեուր հայր իմ զյոյժ երախաաուրն առ եոգեուրն և առ մարմնաուրն, զվարժսպետն իմ և յուսուցիչն, զանհաս երաժիշան և քաղցրաձայն զՍեծապարոն սարկաազն և զուսուցիչն մանկանց Սխմի, զոր և միայն հարիւրապաաիկ աացէ նմայ Քրիստոս զերկնից արքայութիւն...» (XV դար):⁴⁸

Հիշաաակարանները հավասասում են, որ երաժիշա եոյումն միջնադարում աըրվել է ոչ միայն անհաս երգահաններին, այլե եոգեուր երաժշտության հմուա գիաակներին:

Այժմ անդրադառնանք վկայությունների այն խմբին, որանդ որևէ եեղինակի (կամ եեղինակների) գործունեության ընդհանուր և համառոտ ընտրագրից հետո եիշաաակվում է կոնկրետ սանդձագործություն: Այս ավյալները վճռորոշ դեր են կաաարել տվյալ եեղինակի սանդձագործական ժառանգության ճշգրաման և ամբոյջական ընտրագրի համալրման դործում: Այսպիսին են, մասնավորապես Մարոպ Մաշաոցի և Սահակ Պարթևի սանդձագործությունների մասին Կիրակոս Գանձակեցու և Կարապետ Սասնեցու եիշաաակությունները: Գանձակեցին երկու

³⁷ Ն. Թանմիզյան, Հաղարծնի Վանքը և Խաչաաուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիաական աշխաաությունների միջբուհական ժողովածու, Արվեստագիաություն, Եր., 1975, էջ 193:

³⁸ Սահակ և Մատթեոս Տարոնեցի, Պաամութիւն, էջ 174:

³⁹ Մատթեոս Ուոնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապաա, 1898, էջ 215, 252:

⁴⁰ Նույն տեղում, էջ 244:

⁴¹ Գրիգոր Մագիսարոս, Թղթեր, էջ 124:

⁴² Հայերեն ձեռագրերի եիշաաակարաններ, Ժ- դար, Եր., 1984, էջ 53-54:

⁴³ Նույն տեղում, էջ 221-222:

⁴⁴ Նույն տեղում, էջ 255-256:

⁴⁵ Նույն տեղում, էջ 299:

⁴⁶ Ժեղարի հայերեն ձեռագրերի եիշաաակարաններ, Սասն առաջին, Եր., 1955, էջ 188:

⁴⁷ Ժեղարի հայերեն ձեռագրերի եիշաաակարաններ, Մասն երրորդ, Եր., 1967, էջ 10:

⁴⁸ Նույն տեղում, էջ 360-361:

նշանավոր գործիչների և նրանց աշակերտների գործերի ընդհանուր ցուցակում եիշաաակել է տալաշարության շարականների մասին, որոնք եեաագայում վերագրվել են Մաշտացին. «Արարին ե երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորեղորով ծննդեանն Քրիստոսի և քառասնորեայ գալստեանն ՚ի տաճարն, մկրտութեանն և եկաւորութեանն ի Բեթանիա և յերուսաղէմ, մեծի շաբաթուն յարչարանացն և յարութեանն, եամբարձմանն և եսգոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ աօնից անբունականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան և ամենայն նմջեցելոց, պէսպէսս և զանազանս և անթիւս, որ մինչև ցայսօր պաշաի յեկեղեցիս Հայաստանեայց»:⁴⁹ Եթե Գանձակեցա վկայությունը ընդհանուր բնույթի է, ապա Կարապետ Մասնեցին աղղակի է նշել, որ Մաշտացը երգել է «եղանակ ապաշխարութեան». «...երգելով գերզս երից մանկանցն, և շարարան եղանակ ապաշխարութեան՝ ըստ թույ աւուրց պաեոցն գոր ընկալեալ երգէ եկեղեցի սուրբ»:⁵⁰

Պատմագրակուն եամարմույթ արժեքավոր եիշաաակություններ են մեզ եասել եթեք նշանավոր կաթալիկաների՝ Կամիաաս Աղեցեցու, Հովհան Օձնեցու և Ներսես Շնորհալու, ինչպես նաև Հսվհաննես սարկավուգ Իմաստասերի գործունեության և սանդագործությունների մասին: Այսպես, Գանձակեցին արժեքավոր վկայություն ունի Կամիաաս Աղեցեցու նշանավոր «Անձինք նուիրեաղք» շարականի մասին. «Յետ անաոն Յովհաննիսի աոնա գկտթալիկաութիւնն աեր Կամիաաս ամս ութ: Սա շինեաց գաւոր աիկնուջն Հոիսիսմեայ գվկայարանն սրայծաո և երաշալի, գի խրթին էք աոաջին շինուածն. գաան է ի մին գնշիարս ոսկեթաց սրբոյն՝ կնքեալ մաաանեալ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սաեակայ, և ոչ իշխեաց րանալ, այլ իւրով մատանեալ կնքեալ՝ ամփոփէ անդէն, արարեալ երգս շարականաց սրբոցն հայերէն այրութենօք, որայ սկիզբն է այս»:⁵¹

Բացառիկ արժեք է ներկայացնում Գանձակեցու եիշատակությունը՝ նվիրված Հովհան Օձնեցա երաժշտութանաստեղծակուն ժողանգությանը: Սասնավորապես, անդրադառնալով Եզր կաթալիկոսի քաղկեդոնասեր գործունեության շնորհիւ եայոց եկեղեցում աիւրող «անկարգության» րարեկաթգմանր ու ծիսակարգի «եայացմանը» աղղված Օձնեցու ջանքերին, պատմիչը եիշաատկել է նաև Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի տոներին նվիրված կոնոնի Հարցի շարականը. «...և երգեաց շարական եարցին՝ «Մեղաք յամենայնի ե գպատուիրանս՝ քո ոչ պաեեցաք. արդ խոստովանիքք աո քեզ», որ մինչև ցայսօր պաշաի յեկեղեցիս եայոց, սկսեալ ՚ի ՃԻԵ թուականէն մինչև ՚ի ՌՂ թուականս, որ այժմ աւուրս մեր է»:⁵² Նշենք, որ Օձնեցուն շարականագիրների ասրթեր ցուցակներում վերագրվել է ոչ միայն եիշալ «եարցը», այլև ամթույք կանոնի եթգրի մեծ մասը (Օրենություն՝ երկու պաակերալ, Հարց, Գործք, Աղորմյա, Տեր Հերկից և Սանկունք և այլ կանոնների երգեր):⁵³

Ինչպես և պեաք էր սպասել, ամենածավալուն և փաստատաո եիշաաակությունները վերաբերում են Ներսես Շնորհալու երաժշտական գործունեությանն աթալած ժառանգությանը: Այսպես. Կիրակա Գանձակեցին գրում է. «...կարգեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, աաղս և ոաանատրս, քանգի նորա է յարութեան օրենութիւնն՝ երրորդ կուլմն, և աստաւածածնի փոխման երկուց աւուրցն, և Պեարոսի և Պողոսի օրենութիւնն, և մանկունքն և եամբարձին,... և Ռրդուցն որոտման օրենութիւն և շարական մի Անաոնի, և երկու Թէոդոսի և մի քառասնիցն, և մի առաքելոցն, և աւագ շարաթին երից աւուրց օրենութիւն, երկուշաթթին, երեքշաթթին, չորեքշաթթին, և երկու շարական յարութեան ճաշոյ, և Նինուէացուցն, և երեշաակապեանացն, և Վարդանացն, և այլ րագում շարականս: ...արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պաեէին գրերդն»:⁵⁴ Ի դեալ, XIII դարից ի վեր վաթթագրական սսլոյաւրների մեջ Գանձակեցու Պատմությունը Ներսես Շնորհալու ստեղծագործական ժառանգությունն աոավիլ մանրամասն նկարա-

⁴⁹ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն..., էջ 29-30:

⁵⁰ Կ ա Ր ա պ ե ա Ս ա ս ն ե ց ի, Ներբողեան յաղագս ..., էջ 382:

⁵¹ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն ..., էջ 53:

⁵² Նույն տեղում, էջ 69-70:

⁵³ Ն. Թ ա հ մ. ի գ յ ա ն, Գ. Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985, էջ 188:

⁵⁴ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն ..., էջ 118-120:

գրող աղբյուրներից է: Ավելին, Գանձակեցու հիշատակությունը իրավամբ համարվել է այլ աղբյուրների ճշգրտման իրական միջոց: Հաակապես կարևորում ենք սրսամիչի այն ետդորդումը, թե «արար նա զքարոզ սրբոյ պատարագին»: Երե նրա տնեմանք, որ Պաաարագամատույցի բարեկարգման մասին այլ հիշատակություններ չեն սրսարսնվել, ապա Գանձակեցու վերաբերյալ հաղորդումը, իրոք, շատ խոսում ու ծանրակշիռ փաստի արժեք է ստանում:

Ըստ Ն.Թահմիզյանի, ենարավոր է ենթադրել, որ Գանձակեցին տվյալ դեպքում նրսաի ունի մի եայանի, ծավալում ու ամրողական միավոր, ինչպիսին է Հայոց Պաաարագում սարկավագի քարոզներից «Եւ իս խաղաղութեան...»-ը:⁵⁵ Միսւծամանակ նա նաև այն իրադիքին է, որ «Չայնագրյալ Պաաարագում սարկավագի քարոզների այլ եղանակներ ևս (խկ որոշ դեպքերում՝ գուցե և խաքերի վերախմբագրումը) սրսականում է Ընորեսող գրիին»:⁵⁶ Կ.Գանձակեցին առավել որոշակի է խոսել Ընորեսող, այսպես սոսաս. արապաշատմունքային⁵⁷ առեղծագործությունների մասին («Յիշեսցուք ի գիշերի», «Չարթիք փառք իմ», ուշագրսով հանելուկներ), որոնք «ասասցեն ի գիներբուս և ի եարսանիս»:⁵⁸

Կիրակոս Գանձակեցին ունի նաև մեկ այլ հիշատակության, որը Հովհաննես սարկավագ Իմասասերի երաժշական գործունեությունը վկայող նույնպես միակ աղբյուրն է. «արար և շարական Դևոդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ սկիզբն է. «Պայծառացան այսօր տուրք եկեղեցիք», գրեաց սա և գիրս աղօթից. գրեաց և օրինակս սսայգ գրոց»:⁵⁹

Սինչ այժմ նշված սրսումագրական հիշատակությունները երաժշագիական ուսումնասիրություններում բնդունվել են անվերապսեորեն: Մինչդեռ իրն նաև այնպիսիները, որոնք առայսօր տարակարծաթյաններ են առաջացնում: Այդպիսին է Վարդան Արևելցու հիշատակությունը VII դարում Աշոտ Պատրիկ Բագրատունու՝ Դարույնքի Ամենափրկիչ եկեղեցու նավակառիքի սաիթով հորինած և կաաարած «Չորս ըսա պաակերին քում» շարականի մասին. «(Աշոտ- Հ.Մ.) շինեաց գԴարօնից եկեղեցին յամուն փրկչական պաակերին, գոր երեր որդի նորա յարևմաից, մասամբ. և ի նաուկատիսն երգեաց Չորս պաակերին»:⁶⁰ Այն, որ հայոց պաշտամունքագության մեջ կարող էր բնդգրվել աշխարհիկ հեղինակի սանդագործությունը, հգակի երևույթ չէ միջնադարում:⁶¹ Վեհաարույց մեկնությունների առիթ է եանդիսացել պատմիչի հիշատակած հեղինակի և շարականագիղների միջնադարյան մի շարք արժեքավոր ցուցակների ավյալների անհամապասասխանաթյանը:⁶² Դրանցում իրրև հեղինակ նշված է Գրիգոր Մաղիսարոսը, որը նույնպես հայոց բարձրաշխարհիկ առեմի նեթկայացուցիչ էր և նաև բագմաշնորհ արվեսաագեա: Ուշագրավն այն է, որ փաստերի այս հակադրության մեջ այնամամեայնիվ ավանդարար նախընթերի⁶³ է համարվում Արևելցու հիշատակությունը: Թեև խնդրի համակողմանի քննությունը, որ բոլորովին վերջերս կաաարվել է Ա.Արևշաայանի կողմից,⁶⁴ աղբյուրագիտական և տեքսաարանական մանրագին վերլուծությանը հիմնավորվում է Գրիգոր Մագիսարոսի եկյինակման փասար XI դարում Հաիուց Թատի վանական համայիրի վերականգման մեծածավալ աշխաաանքի շրջանակներում:⁶⁵ Այս պարագայում ամենայն հավանականությանը կոսրսծելի է դատում այն աղբյուրի

⁵⁵ Ն. Թահմիզյան, Ներսես Ընորեսիին..., էջ 42:

⁵⁶ Նույն աեղում:

⁵⁷ Օգաագործել ենք Ն.Թահմիզյանի աերմինը, որով նշվել են ընությունվ կրոնական, սակայն պաշտոնեթությունից դուրս կատարվող երգեցողությունները:

⁵⁸ Կ ի ը ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն ..., էջ 147:

⁵⁹ Նույն տեղում, էջ 113:

⁶⁰ Հաարումն պատմութեան Վարդանայ Վարդապեաի, Վենեաիկ, 1862, էջ 71:

⁶¹ Հիշենք Խոսրովիդուխտ Գողթնեցուն

⁶² Տես Ա.Արևշաայան, Ով է «Չորս ըսա պաակերին քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե:

⁶³ Նշենք, որ այսօր էլ այդ ավանդույթը պանայանում է իր գործառույթը եոգևոր երգերի ժողովածուներում:

⁶⁴ Ա. Արևշաայան, նշվ. աշխ.:

⁶⁵ Նույնը:

հարցը, որից օգտվել է Արևելցին: Կարելի է ենթադրել, որ իր ժամանակին Աշոտ Պատրիկ Բագրատունին ևս երթինել է, և այդ մասին ինչ-ինչ եիշատակություններ պատճառ են հանդիսացել, որ Վարդան Արևելցին նույնացներ այդ սանդղագործությունները:

Հայագիտության մեջ իրարամերժ մեկնություններ են առաջացրել նաև Ստեփանոս Սյունեցի նույնանուն երկու երաժիշտների մասին եիշատակությունները, որոնք հանդիսանում են Կիրակոս Գանձակեցու, Սանփանոս Օրբելյանի և Թովմա Մեծոփեցու աշխատություններում: Նշենք, որ կասկածի առկա է առնվել նրանց գոյության փաստն իսկ:

Երկու ասարեր եեղինակների գոյությունը հավաստող եիշատակություններ են Գանձակեցու արժեքավոր վկայությունները, որոնք առաջին անգամ մանրագին քննել է Մ. Չամչյանը: Սանփանոս Սյունեցի Բ-ի մասին նշել է Մսնուկ Արեղյանը, որը, սակայն չի անդրադարձել Ստեփանոս Սյունեցի Ա-ի ժողովագրության խնդրին:⁶⁶ Ն. Թահմիզյանը ևս, հենվելով Մ. Չամչյանի տեսակետի վրա, Գանձակեցու տվյալներից բխեցրել է երկու ասարեր եեղինակների գոյությունը:⁶⁷

Անդրադառնալով դրանց: Կիրակոս Գանձակեցին նախ Սանփանոս Սյունեցի եպիսկոպոսի մասին եիշատակել է V դարի թարգմանիչների թվում,⁶⁸ այնուհետև նույնանուն եեղինակ է նշվել նաև հաջորդ էջում քերականների և թարգմանիչների շարքում:⁶⁹ Ըստ Ն. Թահմիզյանի՝ Ստեփանոս Սյունեցի ստաջինը V դարի եեղինակ է, մինչդեռ երկրորդը՝ VIII: Որոշ աղբյուրներում, օրինակ հայսմավարքներում Սանփանոս Սյունեցի Ա-ն եիշատակվել է նաև Սանփանոս Աստվիկ մականունով:⁷⁰ Սանփանոս Սյունեցի Ա-ին այդպես է անվանել նաև Թովմա Մեծոփեցին:⁷¹ Արժեքավոր մանրամասներ ունի նաև Սանփանոս Օրբելյանը. «... *բաժանեաց և զուրն ձայնն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրենաբիւնն, երգեաց և կցորդս քաղցրահամս, յարմարեաց և զսաղորդին Յինանց եօթն եղանակօք յոթ խորերդատր, և զպահոցն որ յաղուհացն երգի. մեկնեաց և զխորհուրդ զիշեղային պաշամանն*»:⁷²

Թվում է, որ Սանփանոս Օրբելյանի հաղորդումը հավաստում է Հարաթյան ավագ Օրենությունների՝ VIII դարի եեղինակ Սանփանոս Սյունեցուն լինելը (Ա. Ամատունի, Մ. Օրմանյան և ուրիշներ): Մինչդեռ Արեղյանը, ապա նաև Ն. Թահմիզյանը այն հակառակ մաքին են, որ եիշյալ օրենությունները կարող էին սանդղավել ավելի վաղ:⁷³ Հետևաբար, ըստ վերջինի, մարգարեական օրենությունների հարասությանը երթնված կցուրդները վերագրելի են Ստեփանոս Սյունեցի Ա-ին:⁷⁴

Ժամանակակից շարականագիտությունը, հիմնվելով բանագիտական ուսումնասիրության վրա, հանգել է այն կարծիքին, որ իրենց լեզվա-ոճակոմ քնորոշիչների առումով եիշյալ օրենությունները չէին կարող ստեղծվել վաղ միջնադարում և, հետևաբար դրանց եեղինակը Ստեփանոս Սյունեցի Բ-ն է:⁷⁵

Պատմագրական եիշատակությունները բացառիկ կարևոր արժեք են ներկայացրել հատկապես այն դեպքերում, երբ դրանք այս կամ այն սանդղագործության գոյության փաստող միակ աղբյուրն են: Այդպիսիներից է VII դարում ստվանից իշխան Ջվանշիրի մանվան սաիթով Դավթակ Քերթուկի երթնած Ողբի մասին Մովսես Կաղանկավազու եիշատակությունը. «Յայնժամ ճարասասն ուն 'ի մէջ անցեալ, անդեակ արեհասական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ՝ ենագիտական վարժիւրն յաջալակ և վերձանակում քերթութեամբ յառաջալէմ, յառաաարեր բա-

⁶⁶ Մ. Արեղյան, *նշվ. աշխ.*, էջ 539-540:

⁶⁷ Ն. Թահմիզյան, *Սյունեցի եանանուն երկու երաժիշտներ և Հարաթյան ավագ օրենությունները*, «Էջմիածին», 1973, հ. 2, էջ 32:

⁶⁸ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն...*, էջ 28:

⁶⁹ Նույն տեղում, էջ 29:

⁷⁰ Ն. Թահմիզյան, *Սյունեցի եանանուն...*, էջ 32:

⁷¹ Թովմա Մեծոփեցի, *Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860*, էջ 38:

⁷² Մտեփանոս Օրբելյան, *Պատմութիւն...*, էջ 139:

⁷³ Մ. Արեղյան, *նշվ. աշխ.*, էջ 340:

⁷⁴ Ն. Թահմիզյան, *Սյունեցի եանանուն...*, էջ 35:

⁷⁵ Տե՛ս Չայնազբեալ Շարական եոգևոր երգոց, *Եր.*, 1997, Առաջարան, էջ XVIII:

նից պաճուճանացն ճարաարտիքամբ և քաջապէս երաաարակող, լեզու ունելով մման երագագիր գրչի, սա յոլով ատուրքք յառաջ ժաման էր 'ի դրան արքունի: Եւ իբրև հասանէր օրհասական շշուկն 'ի վստայ արևելից աշխարհիս սակս յանկարծահաս արանման մեծի զօրավորին, յայնժամ սկսաւ նա *երգել ըստ ալֆաֆիաաց գլխակարգութեանց զողոս գայս ի վերայ բարեացապարտին Ջիվանշիրի*»:⁷⁶ VIII դարի կին երաժիշա Սահակադուխտ Սյունեցու եորինած շարականի մասին է հիշատակել Ստեփանոս Օրբելյանը. «էր և սորա քոյր մի' ի մանկութենէ ստացեալ գվալս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գստնոյ յայրի միոջ, և անահասնելի վարս ճգնութեան կրէր յոնձին. որոյ անուն Սահակադախտ: Սա լուծ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքով վարագայրի նստեալ ուսուցանէր զբազումս: Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ Սրբուհի Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ»:⁷⁷ IX դարում Արծրունկյաց իշխան Սուշեղի եորինած երգի մասին հիշատակել է Թովմա Արծրունին. « էր վարժեալ Աստուածաշունչ զրաց և ընդել և ծանոթ էր ճարասասանական երահանգիցն՝ եղ առայն ժամու իմացական անսութիւնն գերզս՝ որոյ սկիզբն է՝ «Անգրադել ական սրաի նայեցող անձն իմ ի միսանգամ գալուսան», ե աուն ի յութեորդ վանգէ»:⁷⁸ Գրիգոր Խլաքեցու (XV դար) ստեղծագործությունների մասին է հիշատակել Թովմա Մեծովեցին. «Եւ բազում երգս գանձուց և տաղից յիշաաակ բողենայ ինքնեան՝ լուծ տօնուսէր եւ պսաաուող սրբոց մինչև զի ոչ եղեալ է և ոչ լինելոց է»:⁷⁹

Արժեքավորելով անհատ երաժիշաների մասին պատմագրական հիշատակությունների նշանակությունը հայ միջնադարագիտության մեջ, կարող ենք կաաարել եետևյալ եզրահանգումները. պատմական աղբյուրներում ընդգրկված փաաաերը հսճախ եզակի բնույթի նյութ են պարունակում; համադրելով մատենագրական այլ աղբյուրների տվյալները եեա՝ դրանք յուրջ կովաններ են՝ այս կամ այն եեղիմակի կյանքի ու ստեղծագործության մանրամասների ճշաման հարցում; հիշյալ աղբյուրների ամբողջական և համահավաք ուսումնասիրությունը մեծապես կնրպտասի միջնադարյան երաժիշա երգահանների համաստեղության համալրմանն ու նորոյի արժեքավորմանը:

УПОМИНАНИЯ ОБ АВТОРАХ-МУЗЫКАНТАХ В АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИОГРАФИИ V-XV ВВ.

Резюме

А. Степанян

Среди прочих письменных источников, историография является важнейшей составляющей в изучении жизни и творчества армянских средневековых авторов-музыкантов-гимнотворцев. Различаются следующие типы упоминаний: а) упоминается имя автора-гимнотворца или музыканта индивида. в) кроме упоминания имени автора перечисляются его произведения.

В статье дана научная оценка целостно-комплексного изучения письменных историографических источников.

⁷⁶ Սովսիսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ., 1860, էջ 179:

⁷⁷ Ս տ ե փ ա ն ո ս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թ., 1910, էջ 139:

⁷⁸ Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւնն աանն Արծրունեաց, Թ., 1917, էջ 297:

⁷⁹ Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ ..., էջ 42: